ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 451

« 17 » մայիսի 2021թ. ք. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՆԱԽԿԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ԶՈՀՎԱԾ (ՄԱՀԱՑԱԾ) ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ կառավարության 06.12.2018թ.-ի թիվ 1419-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Էջմիածին քաղաքի բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին բնակարանային հաշվառման վերցնելու մասին Էջմիածնի համայնքապետարանի հանձնաժողովի 12.05.2021թ. թիվ 2 եզրակացությունը, հաշվի առնելով Էջմիածին քաղաքի բնակիչ՝ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող նախկին զինծառայող Կարեն Վահագնի Պուլուզյանի՝ բնակարանային հաշվառման վերցնելու դիմում-խնդրանքը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաք, Սասունցի Դավթի թղմ., (նախկին Պետ. տնկարան) թիվ 53 ուսումնարան, թիվ 2 սենյակ հասցեում հաշվառված՝ Կարեն Վահագնի Պուլուզյանին և իր ընտանիքին վերցնել բնակարանային հաշվառման՝ բնակարանային պայմանները բարելավելու համար:
2. Հաստատել Էջմիածին քաղաքի բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողի ընտանիքի ցուցակը, համաձայն հավելվածի:
3. Ցուցակում ընդգրկված ընտանիքի բնակարանային պայմանները բարելավելու նպատակով՝ անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու համար դիմել ՀՀ Արմավիրի մարզպետին՝ ՀՀ Պաշտպանության նախարարությանը համապատասխան միջնորդություն ներկայացնելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԚԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ